

Reçu CLT / CIH / ITH

Le

03 AVR. 2018

N°

0203

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 փետրվարի 2018 թվականի N 144 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 11-Ի N 310-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի
«Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման
չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը
հաստատելու մասին» N 310-Ա որոշման N 2 հավելվածը լրացնել նոր՝ 25-32-րդ կետերով
համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. փետրվարի 20
Երևան



Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
փետրվարի 15-ի N 144 - Ա որոշման

NN ը/կ	Անվանումը	Բնագա- վառը	Տարածման շրջանը	Կրողը	Պատմական հակիրճ տեղեկանք	Բնութագիրը (նկարագրությունը, առանձնահատկությունները)	Կենսունակությունը (պատմական, մշակութային, տնտեսական, հասարակական նշանակությունը)
1	2	3	4	5	6	7	8
25.	Հայկական տառարվեստը և դրա մշակութային դրստորումները	Ժողովրդա- կան կիրառա- կան արվեստ	Տարրը տարած- ված է ՀՀ բոլոր 10 մարզերում, մայրաքաղաք Երևանում և հայ- կական սփյուռքի համայնքներում:	Տարրի կրողները ժողովրդական արվեստին տիրա- պետող վարպե- տները և նրանց սաներն են, մասնա- վորապես, գեղագի- րներ, ասեղնագործ- ներ, մանրանկա- րիչներ, գորգա- գործներ, արծա- թագործներ, ինչպես նաև՝ ինքնուս անհատներ կամ խմբեր՝ անկախ սեռից և տարիքային պատկանելությունից:	4-րդ դարի վերջին Հայաստա- նում տեղի ունեցող քաղաքա- կան գործընթացները, և հատ- կապես Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև Հայաս- տանի բաժանման (387 թ.), ինչպես նաև շուրջ մեկ դար որպես պետական կրոն ընդունված քրիստոնեության տարածման կարևոր գործու- նեցը, ծնունդ տվեցին սեփա- կան այբուբենն ստեղծելու գաղափարին: Եվ պատահա- կան չէ, որ նույն ինդիորը միա- ժամանակ մտահոգել էր ոչ միայն արքունական հմուտ քարտուղար Մեսրոպ Մաշտո- ցին և կաթողիկոս Սահակ Պարթևին, այլև Վռամշապուհ թագավորին: Ստեղծված քաղաքական իրադրության և սեփական գիրն ունենալու ցանկությամբ տոգորված՝ երկրի առաջին դեմքերի պատ- րաստակամության շնորհիվ 405 թ. ստեղծվեց Մաշտոցյան այբուբենը: Այբուբենի ստեղ- ծումը նշանակալի դեր ունեցավ հայ ժողովրդի պատմության	Հայկական այբուբենի կիրառական նշանակությունները լայն ասպարեզ են բացում ուսումնասիրողների համար, մասնավորապես, նրա դրսևորումներն այլալեզու զրականության համատեքս- տում: Դեռևս 7-րդ դարից պահպանվել է հնագույն պապիրուսե մի պատառիկ, որն ամբողջությամբ շարադրված է ուշադրություն է դարձվել հատկապես այդ բացառիկ նմուշի հնագրական ար- ժեքին, այսինքն՝ տառաձևերին, որոնք իրենց ժամանակի համար բավական անսովոր են: Դարերի ընթացքը ցույց է տալիս, որ հայկական այբուբենով տա- ռադարձվել և գրի են առնվել նաև լատի- ներեն, արաբերեն, լեիերեն, ռուսերեն, թուրքերեն և այլ լեզուներով տեքստեր, որոնք միջմշակութային փոխառնյու- թյունների լավագույն դրսևորումներ են և վկայությունը հայկական այբուբենի ճկունության: Այս հանգամանքով այն բացառիկ տեղ է զբաղեցնում այլ այբուբենների շարքում: Հայկական տառերը ծառայել են նաև հայ ծածկագրության տարբեր համա- կարգերի ստեղծմանն ու ձեռագիր վիճագիր աղբյուրներում դրանց կիրառ- մանը: Հիշատակելի են նաև այբուբենի	Պատմական տեսանկյունից հայ- կական այբուբենի տառատե- սակների կենսունակությունը փաստվում է այն հանգամանքով, որ այն մշտապես զարգացման ընթացքի մեջ է: Պատմական համատեքստում դիտարկելի են նաև այբուբենի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են ծածկագրությունը, այլալեզու տեքստերի հայատառ տառա- դարձումները և այլն: Հնագույն ձեռագրերը երևան են հանում նաև բարձրարվեստ զարդա- գրության նմուշներ, որոնք ժամանակի ընթացքում իրենց կատարելագործման են հաս- նում կիլիկյան, վասպուրական- յան, ինչպես նաև Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոցներում: Մշակութային տեսանկյունից հայկական տառարվեստի կենսունակությունն ավելի քան հստակ է. դարերի ընթացքում այն մշտապես ճանաչվել է որ- պես հայ ժողովրդի ոչ նյութա- կան մշակութային ժառանգու- թյուն և նույնականացվել է այն ստեղծող ժողովրդի հետ:

1	2	3	4	5	6	7	8
					ամբողջ ընթացքում: Դրանով սկիզբ դրվեց հայ ինքնուրույն և թարգմանական գրականությանը, որն այնուհետ զարգացման լայն թափ ստացավ, թարգմանվեց Սուրբ Գիրքը, գրվեցին հայ պատմագրության նշանակալի երկերը, որոնք այսօր էլ այդ շրջանի պատմության անփոխարինելի աղբյուրներն են: Գրի ստեղծումից անմիջապես հետո վանքերին կից բացվեցին դպրոցներ, վարժարաններ, որոնցում ուսուցանվում էր հայկական այբուբենը: Գրաճանաչությունը այն թափ էր ստացել արդեն 5-րդ դարում, որի մասին վկայում են ոչ միայն հայ մատենագիրների երկերը, թարգմանությունները, եկեղեցական բնույթի աշխատությունները, այլև հայ ուխտավորների թողած արձանագրությունները: Ինչպես ցույց են տալիս հայտնի հայագետ Մ. Սթոունի ուսումնասիրությունները, դեռևս 5-րդ դարի սկզբներին, այսինքն՝ հայկական գրի գյուտից գրեթե անմիջապես հետո, հայ ուխտավորները Երուսաղեմ այցելելիս թողել են նաև տարաբնույթ վիմագիր հիշատակագրություններ, ինչը խոսում է Հայաստանում նշված շրջանում գրի տարածվածության մասին: 36 տառ պարունակող հայկական այբուբենը անխաթար գործածվել է մինչև 12-րդ դար, երբ Կիլիկյան թագավորության	թվային կիրառությունները, որոնք հատուկ են նաև աշխարհի մի շարք այլ հնագույն այբուբեններին, ինչպիսիք են հունարենն ու լատիներենը: Առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հայկական այբուբենի գեղագրության և զարդագրության ոլորտները, որոնք գրավում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի ուսումնասիրողների և արվեստասեր հասարակության ուշադրությունը: Հատկանշական է դիտարկել, որ հայ զարդագրությունը, թեև իր բարձրագույն արտահայտությունը գտնում է հայերեն ձեռագրերում, սակայն առանձին վիմագրերում նույնպես կարելի է տեսնել զուվագործոց զարդագրեր, ինչպիսիք են Նորավանքի հայտնի վիմագրերը: Հայ զարդագրությունը հարուստ է իր տեսակներով ու ենթատեսակներով, որոնք պատկերված են միջնադարյան հայ վարպետների, ծաղկողների ու մանրանկարիչների գործերում: Առավել հաճախադեպ են հանգուցագիրը, թռչնագիրը, կենդանագիրը, ապա՝ մարդագիրը, առասպելական կամ մտացածին կենդանիներով ձևավորված գրերը, որոնք իրենց դրսևորումն են գտնում ժողովրդական արվեստի տարբեր ոլորտներում՝ քանդակագործություն, գորգագործություն, ասեղնագործություն, գրականություն, մանրանկարչություն և այլն: Հատկանշական է, որ իր գոյության ավելի քան 16 դարերի ընթացքում հայկական այբուբենը դրսևորվել է ոչ միայն իր բուն նշանակությամբ՝ ծառայելով գրավոր ժառանգության ստեղծմանը, այլև ծնունդ տվել արվեստի մի շարք գործերի, որոնք այսօր էլ շարունակում են հիացնել մարդկանց ու նոր գաղափարներ ներշնչել:	Հայկական տառարվեստի ծնունդ են հայկական գեղագրությունը և մասնավորապես մանրանկարչության ճյուղ համարվող զարդագրությունը, որոնք ցայսօր շարունակում են իրենց կիրառական դրսևորումները ժողովրդական արվեստի տարբեր ոլորտներում՝ քանդակագործության, ոսկերչության, արծաթագործության, փայտի գեղարվեստական փորագրության, ինչպես նաև գեղարվեստական գործվածքի, ասեղնագործության ու բաժնիկայի մեջ: Ներկայումս ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգում շարունակվում են միջնադարյան հայ վարպետների թողած ժառանգության ուսումնասիրումն ու փոխանցումը: Որպես տնտեսական և հասարակական նշանակություն՝ կարող են դիտարկվել հայկական տառարվեստի արդի կիրառությունները տարբեր ոլորտներում, այդ թվում՝ հուշանվերների պատրաստումը, թանգարանային նմուշների ցուցադրությունները: Այս առումով հայկական գրչարվեստի բացառիկ շտեմարան է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը, որը հայկական ձեռագրաստեղծման և տառատեսակների տարածման հիմնական օջախներից է: Այն իրականացնում է մշակութային տարբեր միջոցառումներ՝

1	2	3	4	5	6	7	8
					տեսակների զարգացման երեք խոշոր՝ 1 Երկաթագիր, որն առավելապես գործածվել է 5-12-րդ դդ. ձեռագրերում և վիմագրերում 2 Բազրգիր, որը հանդիպում է 10-րդ դարից սկսած, լատինալի տառերի լայն կիրառություն է գտնում 12-րդ դարից 3 Նոտրգիր, հաճախագեղ է 16-րդ դարից սկսած, թեև վաղ շրջանի առանձին օրինակներ նույնպես նկատվում են ձեռագրերում: Մի առանձին տեսակ է նաև շրագիրը, որն ավելի ուշ շրջանից է տարածում ստանում և կիրառվում մինչ օրս: Հայկական այբուբենն ու նրա գրատեսակները մշտապես եղել են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Ստեղծվել է հարցին նվիրված հարուստ գրականություն: Հիշատակելի են հատկապես Վինենայի Մխիթարյան միաբան հայր Հ. Տաշյանի, հայտնի լեզվաբան Հր. Աճառյանի, վիմագրագետ Կ. Ղաֆադարյանի, պատմաբան Ա. Աբրահամյանի և այլ նրախոսավորների աշխատանքները՝ նվիրված գրին ու դրա զարգացման պատմությանը:	ված են այբուբենին, նրա ստեղծողին, իսկ որոշ գործեր էլ գրված են այբուբենի տառերի հերթականությամբ), այլև նրանից ծնունդ առած կամ նրանով ներշնչված արվեստի տաղանդային ճյուղերից, ինչպիսիք են՝ գեղագրության ու գարդագրության արվեստը, որոնց ուսուցանելը դեռևս միջնադարյան գրչօջախներում հասուն և շարունակվող է դարձվել: Այս ամենը ծնունդ է տալիս հայկական տառարվեստին, այբուբենի գեղարվեստական մշակումներին, որոնք լայն տարածում են ստանում նախ՝ հայկական ձեռագրերում և վիմագրերում, ապա՝ մուտք գործում ժողովրդական արվեստ՝ ամենագործություն, գորգագործություն, ոսկեղեղություն և արծաթագործություն, վաղադրություն և այլն:	Հայրուրամյանների ընթացքում ստեղծված հայկական այբուբենի գրագրական տարբերակները խիստ բազմազան են, իսկ ընծեռած հնարավորությունները՝ անսահման: Իբրև օրինակ կարելի է մատնանշել մեծօրյա նորաճ գրատեսակները, որոնք ստեղծվում են հնի ու նորի շնորհիվ համադրումներով՝ ծառայելով նորագույն տեխնոլոգիաների հապճիկացման ու համակարգային աշխարհում հայկական այբուբենի ամրապնդմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ



e1a4ca5eea9dbf7169cab6af0b42758b

REFERENCE

GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

DECISION

No 144 – A of 15 February 2018

ON MAKING SUPPLIMENTS IN DECISION N 310-A OF 11 MARCH 2010
OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

The Government of the Republic of Armenia hereby decides:

To supplement the Annex N 2 of the Government of the Republic of Armenia N 310-A of 11 March 2010 “On Approving the Criteria of Compiling Lists of Intangible Cultural Values and the List of Intangible Cultural Hertage Values of the Republic of Armenia” with new points 25-32, in accordance with the Annex.

PRIME MINISTER
OF THE REPUBLIC OF ARMENIA

K. KARAPETYAN

20 February 2018
Yerevan

Reference to Annex
Decision of the Government of the
Republic of Armenia 144-A of 15 February
2018

NN	Name	Sphere	Area of Distribution	Bearer	Brief historical reference	Characteristics (description, features)	Viability (historical, cultural, economic, social significance)
1	2	3	4	5	6	7	8
25.	Armenian Letter Art and its Cultural Expressions	Folk Applied Art	The element is popular in all 10 marzes of the RA, in capital city of Yerevan and the communities of Armenian diaspora.	The bearers of the element are the masters of folk art, their pupils, namely penmen, sculptors, embroiderers, miniaturists, carpet makers, jewelers, as well as self-educated individuals or groups, despite the gender and age.	The political processes in Armenia in the end of the 4th century, the important factors of dividing Armenia between Persia and Byzantium (387), as well as distributing Christianity adopted as a state religion created the idea of inventing own alphabet. And it's not accidental, that the same issue concerned not only Mesrop Mashtots, the royal skilled secretary, and Sahak Partev, the Catholicos, but also the King Vramshapuh. Fraught with the political situation and the desire of having own letters, thanks to the willingness of the country's first figures, the Mashtotsian alphabet was invented in 405. The invention of the Alphabet had a significant role during the whole period of Armenian history. That was the beginning of the Armenian individual and translation literature, which then gained momentum – the Holy Book, famous works were written on Armenian Historiography, which even nowadays are irreplaceable sources of the history of that period. Right after the invention of letters, schools, colleges were opened next to the churches, where the Armenian alphabet was being	Applied meanings of Armenian alphabet open a wide arena for the researchers, namely, its dimensions in the context of foreign literature. Since the 7th century, an ancient papyrus fragment has been kept, which is totally penned in Armenian-lettered Greek. A special attention was paid to the archeological value of that unique exemplar, i.e. the forms of letters, which were quite unusual for that time. The course of the ages shows that the texts in Latin, Arabic, Polish, Russian, Turkish, and other languages were transliterated and written in Armenian alphabets, which are the best expressions of mutual intercultural connection as well as witness of the flexibility of Armenian alphabet. In this context it has its unique place among other alphabets. Armenian letters also served for the creation of different systems in Armenian coding and their use in manuscript and lithographic sources. It's worth to mention the digital use of the alphabet, which is specific for a range of other ancient alphabets of the world, such as Greek and Latin. The spheres of calligraphy and ornamental writing have a special place, and attract the attention of not only Armenian, but also foreign	From the historical point of view, the vitality of the letters type of Armenian alphabet is based on the fact that it is in permanent development. Other expressions of the alphabet should also be observed in the historical context, such as the coding, Armenian transliteration of foreign texts, etc. The ancient manuscripts reveal exemplars of high-art ornamental writings, which reached their perfection in the miniature schools of Cilicia, as well as Nor Jugha. From the cultural point of view, the vitality of the art of Armenian letters is more than clear: within centuries, it was always recognized as an intangible cultural heritage of Armenian people, and was identified with its creator nation. The art of Armenian letters gave birth to the Armenian calligraphy, and namely, the ornamental writing, a branch of the miniature, which continue their applied dimensions in different spheres of folk art – sculpture, jewelry, silversmithery, artistic wood engraving, as well as artistic texturing, embroidery, and

1	2	3	4	5	6	7	8
					taught. Literacy became popular in the 5th century, on which one can find not only works of literary men, translations, ecclesiastical works, but also records left by Armenian pilgrims. As the studies of M. Stone, a specialist in Armenian Studies, done in the beginning of the 5th century, i.e. right after the invention of Armenian letters, show, when visiting Jerusalem, Armenian pilgrims left diverse lithographic records, which tell us about the dissemination of the writing in Armenia in the mentioned period. The 36-letters Armenian alphabet was continuously used till the 12th century, when due to the interconnection of the Kingdom of Cilicia and Latin world, two more letters: O (O) and Ֆ (F) were added to the alphabet. Nowadays as well the Armenian alphabet is used with minor changes, having three main stages of development: 1. Yerkatgir (literally: metal/iron letters), which was mainly used in the manuscripts and lithography in 5-12th centuries. 2. Bolorgir (literally: complete letters), which can be found since the 10th century, however has widely been used since the 12th century. 3. Notrgir (literally: notarius letters), frequently found since the 16th century, though can be ordinarily found in early periods of manuscripts. There is also a separate type called shhagir (literally: letters written by knitting	researchers and art-lovers. It's remarkable to consider that the Armenian ornamental writing, though finding its highest expression in the Armenian manuscripts, can also be found in specific lithographs, such as the famous lithographs of Noravank. The Armenian ornamental writing is rich with its types and sub-types, which are drawn in the works of medieval Armenian masters, artists, and miniaturists. Hangutsagir (knot letters), trchnagir (bird letters), kendanagir (animal letters), and later mardagir (human letters), letters with mythical animals are rarely found and are expressed in different spheres of the folk art, such as sculpture, carpet weaving, embroidery, literature, miniature, etc. It's remarkable that during its existence of 16 centuries, the Armenian alphabet was expressed not only with its main meaning, serving for the creation of written heritage, but also gave birth to various factors of the art, which still continue fascinating people and inspiring new ideas. During its existence of more than 1600 years, the love and respect of people towards the alphabet has only become deeper. It's evident not only from the written heritage (separate works are dedicated to the alphabet, its creator, and some works are written with the order of the alphabet letters), but also the branches of arts born or inspired from it, such as the art of calligraphy and ornamental writing, for the teaching of which were paid a special attention to in medieval schools. All this gave birth to the art of	batika. Currently, the study and transfer of the heritage left by the medieval Armenian masters continue in formal and informal educational system. In the economic and social meaning, the modern uses of the art of Armenian letters are considered in modern spheres, such as the preparation of souvenirs, exhibitions of museum exemplars. In this regard, an exceptional repository of Armenian writing is Matenadaran, the Scientific-Research Institute of Ancient Manuscripts, which is one of the main centers of the creation of writing and distribution of Armenian letter types. It performs different cultural events, promoting the transfer and popularization of this type of intangible cultural heritage. The versions of writing of Armenian alphabet created during the centuries are diverse, and the possibilities are unlimited. The bright example of them is the contemporary letter types, which are created with the excellent combination of the old and the new, serving for the armenification of modern technologies and strengthening of the Armenian alphabet in the computer world.

1	2	3	4	5	6	7	8
					needles), which comes from later period and is used till now. Armenian alphabet and its letters types have always been in the center of the researchers. A rich literature has been created devoted to this issue. It's worth mentioning the works of H. Tashyan, Father of Mekhitarist Congregation of Vienna, Hr. Acharyan, a prominent linguist, K. Ghafadaryan, an epigraphist, A. Abrahamyan, a historian, and other honored people, dedicated to the letters and the history of its development.	Armenian letters, art works of the alphabet, which are widespread first in the Armenian manuscripts and lithographs, then enter into the folk art: embroidery, carpet weaving, jewelry making and silversmithery, stone and wood engraving, etc.	

HEAD OF STAFF OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

V. STEPANYAN